ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2015Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Իջևանի համայնքի ավագանու 2015թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստի

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ա.Ճաղարյան
քարտուղար՝ Բ.Թանանյան

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու անդամներ՝ Մեսրոպ Մխիթարյանը, Տիգրան Թամրազյանը, Արտակ Խաչատրյանը, Էմիլ Վարդապետյանը, Գրիգոր Դանիելյանը, Նարեկ Հարությունյանը, Արման Ղալթախչյան, Հասմիկ Ամիրյան

Նիստին հրավիրված և մասնակցում էին լրատվական միջոցների ներկայացուցիչներ, քաղաքապետարանի աշխատակիցներ, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներ, բնակիչներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2015թ. N 45

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 12-րդ հոդվածի պահանջներով

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի 2015թ. բյուջեի 9 ամսվա կատարման մասին հաղորդում
2. Իջևան համայնքում իրականացվող «Ընդհանուր լուծումներ միատեսակ խնդիրներին. աղբահանության ծառայության բարելավումը Իջևան և Բոլնիսի քաղաքներում» ծրագրի մասին
3. Իջևան քաղաքի Ուսանողական փողոցի թիվ 18/2 հասցեի 0.03258հա մակերեսով հողամասում կառուցված շինությունները անհատույց /մշտական/ օգտագործման կարգով «Երևանի պետական համալսարան Իջևանի մասնաճյուղ» ՊՈԱԿ-ին տրամադրելու մասին
4. Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 82 բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանները բնակիչներին անհատույց օտարելու մասին
5. Իջևան համայնքի վարչական տարածքում գտնվող բնակելի կառուցապատման հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
6. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելում
7. Իջևան համայնքի 2015թ բյուջեի ֆոնդային մասում փոփոխություններ կատարելու մասին
8. Իջևան համայնքի ավագանու անդամ Հովիկ Խեչյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին
9. Իջևան քաղաքի Երևանյան փողոցի 220 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող ,,Սպիտակ լիճ,, ջրամբարի պատվարը վարձավճարով ժամանակավոր տիրապետման և համատեղ օգտագործման տալու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ**

1.ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Իջևան համայնքի 2015թ. տարեկան բյուջեն առ 01.10.2015թ դրությամբ եկամուտների մասով կատարվել է 71,7%, կամ նախատեսված տարեկան 492454,8 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 353081,1 հազար դրամ:

Այդ նույն ժամանակաշրջանում սեփական եկամուտները կատարվել են 61,4% /նախատեսված 81266,0 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 49922,8 հազար դրամ/:

Հարկային եկամուտները կատարվել են 64,3%, այդ թվում հողի հարկը՝ 52,1% գույքահարկը՝ 65,0%:

Ընդամենը տուրքերը կատարվել են 55,2%, այդ թվում պետական տուրքերը՝ 55,8%, տեղական տուրքերը՝ 61,5%:

Ընդամենը տեղական վճարները կատարվել են 63,3%:

Համայնքային գույքի օտարման առաջադրանքը կատարվել է 46,8%:

Ընդամենը ծախսումները կատարվել են 70,2%, այդ թվում քաղաքապետարանի պահպանման ծախսերը կատարվել են 68,6%, կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 70,1%, մշակույթի և սպորտի բնագավառում 71,3%, սան. մաքրման և կոմունալ ծախսերը կատարվել են 75,6%:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2015թ. N 46

2.ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ՄԻԱՏԵՍԱԿ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ.ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԻՋԵՎԱՆ ԵՎ ԲՈԼՆԻՍԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի շրջանակներում 17 ամսվա ընթացքում իրականացվելու է ,,Ընդհանուր լուծումներ միատեսակ խնդիրներին. աղբահանության ծառայության բարելավումը Իջևան և Բոլնիսի քաղաքներում» ծրագիրը, որի ընդհանուր բյուջեն կազմում է 232972,10 եվրո, այդ թվում՝ Իջևանի ծրագրի բյուջեի մասնաբաժինը՝ 45876,8 եվրո:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է համայնքի բյուջեից հատկացնել 4572 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ որպես համայնքի ներդրում:

Ելնելով վերոհիշյալից

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ հավանություն ,,Ընդհանուր լուծումներ միատեսակ խնդիրներին. աղբահանության ծառայության բարելավումը Իջևան և Բոլնիսի քաղաքներում» ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից հատկացնել 4572 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ որպես համայնքի ներդրում, այդ թվում՝ 450 եվրոյին համարժեք դրամը՝ 2015թ բյուջեից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2015թ. N 47

3.ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18/2 ՀԱՍՑԵԻ 0.03258ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ քաղաքապետարան է դիմել Երևանի պետական համալսարան Իջևանի մասնաճյուղ ՊՈԱԿ-ի տնօրինությունը, Իջևան քաղաքի Ուսանողական փողոցի թիվ 18/2 հասցեի 0.03258հա մակերեսով հողամասում կառուցված շինությունները /26.9քմ ներքին մակերեսով աշխատասենյակ և ընդհանուր 68.4 գծմ /6.9քմ/ երկու պարիսպ/ ևս մասնաճյուղին անհատույց /մշտական/ օգտագործման կարգով տրամադրելու խնդրանքով:

Իջևան քաղաքի Ուսանողական փողոցի թիվ 18/2 հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Իջևան համայնքի սեփականության իրավունքը /վկայական թիվ 20102015-11-0027/:

Համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 75 հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի՝ նշված հասցեի հողամասը Իջևան համայնքի կողմից տրամադրվել է Երևանի պետական համալսարան Իջևանի մասնաճյուղ ՊՈԱԿ-ին անհատույց /մշտական/ օգտագործման կարգով /վկայական թիվ 18042015-11-0009/:

Իջևանի քաղաքապետը Իջևան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել վերոհիշյալ դիմումը, և առաջարկել համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 5 հոդվածի 4-րդ կետի՝ Իջևան քաղաքի Ուսանողական փողոցի թիվ 18/2 հասցեի 0.03258հա մակերեսով հողամասում կառուցված շինությունները ևս անհատույց /մշտական/ օգտագործման կարգով տրամադրել Երևանի պետական համալսարան Իջևանի մասնաճյուղ ՊՈԱԿ-ին:

Քննարկելով դիմումը և ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 5 հոդվածի 4-րդ կետի ու ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ հավանություն Իջևանի քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Ուսանողական փողոցի թիվ 18/2 հասցեի 0.03258հա մակերեսով հողամասում կառուցված շինությունները /26.9քմ ներքին մակերեսով աշխատասենյակ և ընդհանուր 68.4 գծմ /6.9քմ/ երկու պարիսպ/ ևս անհատույց /մշտական/ օգտագործման կարգով Երևանի պետական համալսարան Իջևանի մասնաճյուղ ՊՈԱԿ-ին տրամադրելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ		ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ	
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ		ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ	
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ		ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ	

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2015թ. N 48

4. ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 82 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ դեռևս 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 82 բազմաբնակարան բնակելի վթարային շենքի բնակիչներին տեղափոխել են ժամանակավոր բնակարաններ, մինչև շենքի վերականգնումը: Շենքի վերականգնումը ձգձգելու պատճառով բնակիչները հնարավորություն չեն ունեցել սեփականաշնորհել իրենց բնակարանները: Նկատի ունենալով, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 82 բազմաբնակարան բնակելի շենքը ամբողջությամբ ամրացվել և վերանորոգվել է.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն՝ Բլբուլյան փողոցի թիվ 82 բազմաբնակարան բնակելի շենքի բնակարաններն անհատույց բնակիչներին օտարելու քաղաքապետի առաջարկությանը՝ համաձայն կցվող ցուցակի:

ՀՀ	Անուն, Ազգանուն	Մուտք	Հարկ	Սենյակների թիվը	Նախկին հասցե	Նոր հասցե
1	Խառատյան Վիկտոր Վանիկի	IV	III	3	82/6	82/40
2	Հարությունյան Գայանե Գագիկի	IV	II	1	82/1	82/39

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2015թ. N 49

5. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցում 2053.6քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0144-011/ և Երևանյան փողոցում 128.0քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0094-017/ հողամասերը կադաստրային քարտեզում արտացոլված են, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամասեր, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չեն և դրանց նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չէ:
Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.
1.Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցում 2053.6քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0144-011/ և Երևանյան փողոցում 128.0քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0094-017/ հողամասերի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2015թ. N50

6.ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի

hh	Նպատակը	Հասցե	Մակերեսը/քմ
1	Հասարակական կառուցապատում	Բլբուլյան փ.	27.0
2	Բնակելի կառուցապատում	Բլբուլյան փ.	2053.6
3	Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/	Բլբուլյան փ.	32.25հող/32.25 շին.
4	Բնակելի կառուցապատում	Բլբուլյան փ.	19.8
5	Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/	Անկախության փ.	28.2 հող/28.2շին.
6	Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/	Անկախության փ.	36.2 հող/36.2 շին.
7	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	128.0
8	Բնակելի կառուցապատում	Անկախության փ.	19.4
9	Բնակելի կառուցապատում	Բլբուլյան փ.	7x24.0
10	Բնակելի կառուցապատում	Անկախության փ.	19.2
11	Բնակելի կառուցապատում	Արցախյան փ.	25.5
12	Հասարակական կառուցապատում	Երևանյան փ.	326.9

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2015թ. N 51

7. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի 2015թ բյուջեի եռամսյակային համամասնությունների պահպանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել բյուջեի ֆոնդային մասում կատարել 6000,0 հազար դրամի վերաբաշխում: Ելնելով վերոգրյալից .

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Քաղաքապետարանի բյուջեի ֆոնդային մասի 04.05.01 բաժնի 5113 հոդվածից կրճատել 6000,0 հազար դրամ և հատկացնել 06.06.01 բաժնի 5129 հոդվածին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	կողմ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ	կողմ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	կողմ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ	կողմ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	կողմ	ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ	կողմ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ	կողմ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ	կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2015թ. N 52

8 ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքային համայնքի ավագանու անդամ Հովիկ Խեչյանը ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու կապակցությամբ դիմել է քաղաքապետարան՝ հրաժարվել Իջևան համայնքի ավագանու անդամությունից և խնդրել ավագանու անդամի իր լիազորությունները համարել դադարեցված:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Իջևան քաղաքային համայնքի ավագանու անդամ Հովիկ Խեչյանի ավագանու անդամի լիազորությունները համարել վաղաժամկետ դադարեցված:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2015թ. N 53

9. ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 220 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ,,ՍՊԻՏԱԿ ԼԻՃ,, ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԸ ՎԱՐՁԱՎՃԱՐՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ղեկավարին է դիմել ,,Վարդան Օրդինյան,, ՍՊԸ-ն, Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող /վկայական թիվ 14072014-11-0022/ ,,Սպիտակ լիճ,, ջրամբարի պատվարը, վարձավճարի դիմաց ,,Վարդան Օրդինյան,, ՍՊԸ-ին ժամանակավոր տիրապետման և համատեղ օգտագործման տալու խնդրանքով:

Քննարկելով ,,Վարդան Օրդինյան,, ՍՊԸ-ի դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող /վկայական թիվ 14072014-11-0022/ ,,Սպիտակ լիճ,, ջրամբարի պատվարը, 20 /քսան / տարի ժամկետով, տարեկան 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ վարձավճարով, ,,Վարդան Օրդինյան,, ՍՊԸ-ին ժամանակավոր տիրապետման և համատեղ օգտագործման տալու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԹՈՒՐ ՃԱՂԱՐՅԱՆ